

ՎՐԱՄԱՏԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ԲԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՐԹ
ՐԵՏՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԾԵՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«Ցրահեմ» (ՆԱԺԱՐԹՅՈՒՆ)

ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ

№73 - 74 (17384) ԵԱԲԱՐ 20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 Թ.
ԳԻՆԸ 40 ԹԵՐԹԻ

ԵԿՈՆՈՄԻԿԱ

ԻՐԱԿԼԻ ԿՈՐԱԽԻՉԵ. «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐՆ Է»

Սեպտեմբերի 18-ին Ինգուր Շեկ-ի տարածքում անցկացվեց համդիսավոր արարողություն՝ նվիրված էներգետիկայի օրվան: Միջոցառմանը մասնակցեցին Վրաստանի նախագահ Սիխեիլ Ղավելաշվիլին, վարչապետ Իրակլի Կոբախիձեն, խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին, երկրի կառավարության անդամներ, խորհրդարանի պատգամավորներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:



Դիմելով ներկայից Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեին հատկապես ընդգծեց էներգետիկայի դերը երկրի տնտեսական առաջընթացի գործում, նշելով, որ էներգետիկ անվտանգությունը երկրի տնտեսական զարգացման անկյունաքարն է:

- 2012 թվականից հետո երկրում էներգետիկայի ոլորտը էական առաջընթաց ապրեց, կառուցվեցին նոր հիդրոէլեկտրակայաններ, բերմաէլեկտրակայաններ, արելի եւ քամու կայաններ: 2004-2012 թվականներին երկրի էներգահամա-

կարգի հզորությունը կազմում էր 150 մգվտ, իսկ հիմա այն գերազանցում է 1000 մգվտ,- շեշտեց վարչապետը:

Իրակլի Կոբախիձեի խոսքով, նկատելի առաջընթաց է գրանցվել նաեւ գազի ֆիկացման ուղղությամբ:

- 2012 թվականից հետո Վրաստանի շուրջ 860

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

Սեպտեմբերի 21-ին նորանկախ Հայաստանը եւ համայն հայությունը նշում են Անկախության հռչակման 34-րդ տարեդարձը:



Հայաստանի Անկախության մասին հռչակագիրն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում՝ 1990թ. օգոստոսի 23-ին: Հռչակագրով լուծարվեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը՝ հռչակվելով որպես անկախ Հայաստանի Հանրապետություն: Հայաստանի Գերագույն խորհրդի որոշմամբ՝ 1991թ. սեպտեմբերի 21-

ին հանրապետե անցկացվեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին: Չայնի իրավունք ունեցող քաղաքացիների 94,99 տոկոսը «կողմ» քվեարկեց անկախությանը: Սեպտեմբերի 23-ին Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ:

ՎՐԱՄԱՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

«ԱՐՄԱՔ»-Ը ԱՐԴԵՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ Է, ԹԻՎ 104 ՀԱՆՐԱՅԻՆ ԳՊՐՈՋՈՒՄ

ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՎՐԱՄԱՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ

Սեպտեմբերի 18-ին Թբիլիսիի թիվ 104 հանրային հայալեզու դպրոցում համդիսավորապես բացվեց «ԱրՄաք» ինժեներական լաբորատորիան:

Լաբորատորիայի բացմանը ելույթ ունեցան դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը, Վրաստանի կրթության, գիտության եւ երիտասարդության փոխնախարար Բախա Կվիցիա-



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԱՐՈՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԻՆՏԵՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Սեպտեմբերի 18-ին, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերի պետնախարարի աշխատակազմի կազմակերպմամբ եւ պետնախարար Թեա Ախվեղիանիի նախագահությամբ, անցկացվեց քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման կառավարական հանձնաժողովի ընդլայնված նիստ:

Թեա Ախվեղիանին նիստի մասնակիցներին ներկայացրեց քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարության երկու առաջնահերթային պետական լեզուն՝ որպես ինտեգրման աջակցի եւ որակյալ կրթության մատչելիու-



թյան ուղղությունների միջանկյալ գնահատման նախնական արդյունքները: Պետնախարարը մանրամասն խոսեց իրականացված քաղաքականության արդյունքների մասին: Նրա խոսքով, միջանկյալ գնահատման նպա-

տակը 2024 թվականը ներառյալ ռազմավարության իրականացման արդյունավետության, ձեռք-

ԿՐԹԱԿԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ՝ 2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ, ՍԻՐԵԼԻ՝ ԱՇԿԵՐՏՆԵՐ, ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐ, ԾՆՈՂՆԵՐ...

Սեպտեմբերի 15-ին Վրաստանում գործող 2026 հանրային դպրոցների 572 037 եւ 205 մասնավոր կրթօջախների 71 772 աշակերտների համար մեկնարկեց նոր՝ 2025-2026 ուսումնական տարին: Կրթական հաստատությունների շեմն առաջին անգամ հատեցին 48 012 առաջին դասարանցիներ, որոնցից 41 342-ը՝ հանրային, իսկ 6 670-ը՝ մասնավոր դպրոցներում կստանան կրթություն:

Օրվա առիթով աշակերտներին, ուսուցիչներին, ուսանողներին շնորհավորական ուղերձով դիմեց Վրաստանի նախագահ Սիխեիլ Ղավելաշվիլին, վարչապետ Իրակլի Կոբախիձեն, կրթության, գիտության եւ երիտասարդության նախարար Գիվի Միքաևան:



ԻՐԱԿԼԻ ԿՈՐԱԽԻՉԵ. «ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԵՐԿՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐՆ Է»

«Սիրելի՛ աշակերտներ, ուսանողներ, հարգարժան ուսուցիչներ եւ ծնողներ, սրտանց շնորհավորում եմ ձեզ՝ ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ: Հատկապես շնորհավորում եմ նրանց, ովքեր այս տարի առաջին անգամ բացեցին դպրոցի կամ համալսարանի դռները եւ սկսեցին կյանքի ամենապատասխանատու եւ, միեւնոյն ժամանակ, հետաքրքիր փուլերից մեկը: Ժամանակակից աշխարհի մարտահրավերների ֆոնին հենց որակյալ կրթությունն է մեր երկրի միասնության, զարգացման եւ ուժի անկյունաքարը: Հետեւաբար, կրթության աջակցությունը մնում է մեր կառավարության գերակա խնդիրը: Մաղթում եմ ձեզ հետաքրքիր եւ հաջող նոր ուսումնական տարի»,- ասված է Իրակլի Կոբախիձեի շնորհավորական ուղերձում:



ՄԻԽԵԻԼ ՂԱՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ԱՅՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐՆ ԵՆ, ՈՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎՈՒՄ Է ՄԵՐ ԱՊՈՎԱՆ»

«Այսօր, ես հատկապես շնորհավորում եմ առաջին դասարանցիներին, ովքեր առաջին անգամ բացեցին դպրոցի դռները: Այսօր ձեզ համար սկսվում է նոր, հետաքրքիր, ամնոռանալի ու բացահայտումներով լի մի ճանապարհ: Ուսուցիչներն են ձեր կողքին այս ամենակարեւոր ճանապարհին: Հենց ուսուցիչներն են մեր ազգային եւ ավանդական արժեքների ակնառու պաշտպանները, այն արժեքները, որոնց վրա պետք է հիմնված լինի մեր ապագան: Սիրելի՛ աշակերտներ եւ ուսանողներ, դուք մեր երկրի ապագան եւ ամենամեծ հարստությունն եք: Մաղթում եմ ձեզ հաջողություններ»,- նշված է Սիխեիլ Ղավելաշվիլիի շնորհավորական ուղերձում: (Թեմայի շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԻՐԱԿԼԻ ԿՈՐԱԽԻԶԵ. «ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

բնակավայրերում մուտք գործեց բնական գազը, ինչը զգալիորեն բարձրացրեց հազարավոր քաղաքացիների կենսասնակարգը... Գնշեց վարչապետը: Անդրադառնալով ոլորտի զարգաց-

ման հեռանկարներին՝ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ կառավարությունը հավակնոտ ծրագրեր է կազմել, ըստ որի՝ 2028 թվականի համար երկրում վերանշակվող էներգիան պետք է հասցվի 8000 մգվտի, իսկ 2030 թվականին՝ 10 հազար մգվտի, ինչը լրիվու-

թյամբ կբավարարի երկրի տնտեսական պահանջները:

Վարչապետը շնորհավորեց էներգետիկներին՝ մասնագիտական օրվա կապակցությամբ և պետական պարգևներ հանձնեց ոլորտի աչքի ընկած աշխատակիցներին:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՎՐԱՍԱՆԸ ԱՄԲՈՂՉՈՒԹՅԱՐ ՄԱՐԵԼ Ե շԱՅԱՍԱՆԻ ԵՎ ԵՎՍ ՎԵՅ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԱՐՏՔԵՐԸ



Վրաստանը մինչև 2025 թվականի սեպտեմբերի 1-ն ամբողջությամբ մարել է Հայաստանի և Փարիզյան ակումբի վեց այլ վարկատու երկրների արտաքին պարտքը՝ 2004 թվականին ձեռքբերված վրացական պարտքի մի մասի վերականգնված մասին համաձայնագրի շրջանակում, հայտնել է երկրի ֆինանսների նախարարության կայքը: Ըստ BMG բիզնես գործակալության դա Վրաստանի անկախության առաջին տարիներին կուտակված պարտքն էր:

դուլար: Այս թիվը պարտքի սյունակում մնացել է փետրվարից մինչև օգոստոս: Անցյալ ամսվա դրությամբ, այն զրոյացված է եղել: Ռուսաստանից բացի, մարվել են Ադրբեջանի, Թուրքիայի, Ղազախստանի, Հայաստանի, Իրանի և Նիդերլանդների հանդեպ ունեցած պարտքերը: Ֆինանսների նախարարությունը հավելել է, որ Վրաստանի պետական պարտքը, օգոստոսի դրությամբ, կազմել է ավելի քան 10 միլիարդ դոլար: Երկիրը ամենաշատը ավելի քան 850 միլիոն դոլար պարտք է Ֆրանսիային:

Այդ միջոցները ներառում էին Վրաստանի կողմից մինչև 1999 թվականը վերցված 160 միլիոն դոլարը, 1999 թվականից մինչև 2004 թվականի մայիսը պարտքերի վրա կուտակված տոկոսներն

ու 2004-2006 թվականներին չմարված պարտքը: Ընդհանուր գումարը գերազանցել է 225 միլիոն դոլարը: Փետրվարին Ռուսաստանի պարտքը 7,87 միլիոն դոլարից նվազել է մինչև 3,997 միլիոն

ՎՐԱՍԱՆ - ԶԻՆԱՍԱՆ

ԸՆԴԳԾՎԵՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 18-ին, Վրաստանի ներքին գործերի նախարար Գելա Գելաձեն, Հինաստան կատարած պաշտոնական այցի շրջանակում, հանդիպում ունեցավ Հինաստանի ժողովրդական Հանրապետության հասարակական անվտանգության նախարար Վան Սյաոհոնգի հետ, մասնակցեց Լիանյունգան քաղաքում անցկացվող Համաշխարհային հանրային անվտանգության համագործակցության համաժողովին, որին մասնակցում էին ավելի քան 120 երկրի և միջազգային կազմակերպության մոտ 2000 ներկայացուցիչներ: Մասնակիցների թվում էր Հայաստանի քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանը:



Գելա Գելաձեի և Վան Սյաոհոնգի հանդիպմանը կողմերը քննարկել են երկու երկրների իրավապահ մարմինների միջև առկա համագործակցությունը, կենտրոնացել են ոլորտային բարեփոխումների, ընթացիկ նախագծերի և ոստիկանական համագործակցության շրջանակում տեղեկատվության ու փոր-

ձի փոխանակման կարելուության վրա: Հանդիպման ավարտին Գելա Գելաձեն շնորհակալություն է հայտնել իր չինացի գործընկերոջը համագործակցության համար և հրավիրել նրան պատասխան այց կատարել Վրաստան:

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԻՆՏԵՐՍԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՅ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

բերումների և առաջընթացի դինամիկայի, նաև թիրախային սեգմենտների վրա ազդեցության ուսումնասիրությունն ու վերլուծությունն է:

Հանդիպման շրջանակում, պետնախարարի առաջին տեղակալ Լիա Գիգաուրին խոսեց գնահատման գործընթացի եզրափակիչ փուլի իրականացման հրատապ հարցերի մասին:

Անցկացվեց բանավեճ ձեռքբերումների, ռազմավարության իրականացման գործընթացում բացահայտված միտումների և դեռևս առկա մարտահրավերների շուրջ: Ընդլայնված նիստի աշխատանքին մասնակցեցին քաղաքացիական իրավապաշտպանության և ինտեգրման կա-

ռավարական հանձնաժողովի մշտական և հրավիրված անդամները, հանձնաժողովի աշխատանքային խմբի ներկայացուցիչները, ովքեր անմիջականորեն ներգրավված են ռազմավարության իրականացման ու գնահատման գործընթացում: Մասնակիցների թվում էին «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայրուբյանը և «Գյուլբատան» թերթի գլխավոր խմբագիր Խալաթի Էլչուելը:



Գնահատումը իրականացվեց պետնախարարի աշխատակազմի նախաձեռնությամբ և համակարգմամբ՝ Հիլմ Հան-

րակթական հետազոտությունների ազգային կենտրոնի կողմից, քաղաքացիական իրավապաշտպանության և ինտեգրման պետական ռազմավարությամբ նախատեսված պարտավորություններին համապատասխան:

ՎՐԱՍԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

«ԱՐՄԱԹ»-Ը ԱՐԴԵՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ Ե, ԹԻՎ 104 ՀԱՆՐԱՅԻՆ ԳԴՐՈՋՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նին, Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար Արաքսյա Սվաջյանը, Վրաստանում Հայաստանի դեսպան Աշոտ Սմբատյանը և լաբորատորիայի հիմնադիր, Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության գործադիր տնօրեն Սարգիս Կարապետյանը:

Աշոտ Սմբատյանը շնորհակալություն հայտնեց լաբորատորիայի հիմնադիրներին, Վրաստանի իշխանություններ-

ընդ հիմն երկու երկրների կրթության նախարարությունների՝ գործունե աջակցության համար: Հատուկ շնորհակալություն հայտնեց նաև բարերարներ Գագիկ և Ռաֆիկ Աղաջանյաններին, Մարիա Չախոյանին և ՋԱՀ-ի տնօրեն Սամվել Սկոյանին:

Նույն օրը՝ սեպտեմբերի 18-ին, Վրաստանի կրթության, գիտության, երիտասարդության փոխնախարար Բաիա Կվիցիանին հանդիպում ունեցավ աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի



կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսյա Սվաջյանի հետ: Հանդիպմանը փոխնախարարներն անդրադարձան Վրաստանի և Հայաստանի համակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին և հնարավոր համատեղ ծրագրերին:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՏՎԱԾ ԱՌՈՒՄՈՎ ՎՐԱՍԱՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՌԱՋԱՏԱՐ ԴԻՐՔՈՒՄ Է

Եվրոպական հանձնաժողովը, «Համաշխարհային արդարադատության նախագծի» օրենքի գերակայության ուսումնասիրության շրջանակում, հրապարակել է հանցագործությունների վերահսկման ինդեքսը:



Վրաստանը 100 տոկոսանոց միավորով ստացել է 92 տոկոս և զբաղեցնում է 17-րդ տեղը աշխարհում, հաղորդել է «Վրացական երազանքը»:

Հանցագործությունների դեմ պայքարի առումով ամենածանր իրավիճակը գրանցվել է Մեքսիկայում և Վենեսուելայում:

Եվրոպական հանձնաժողովի հրապարակած ցուցանիշը, ըստ սահմանման, չափում է հանցագործության տարածվածությունը երկրներում, նաև մարդկանց անվտանգության և պաշտպանվածության ընդհանուր ընկալումը:

Եվրոպական հանձնաժողովի հրապարակած ուսումնասիրությունն իրականացրել է World Justice Project-ը, որի կենտրոնական գրասենյակը գտնվում է Միացյալ Նահանգներում:

ԱՍՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱՋԱՆՑՈՒՄ Ե ԱՍՈՒՍԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆ

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալներով, 2025 թվականի առաջին վեց ամսում երկրում գրանցվել է 9 925 ամուսնություն և 6 456 ամուսնալուծություն:



Նույն ժամանակահատվածում, ծառայության հաշվետվության համաձայն, 2025 թվականի հունվար-հունիս ամիսներին ծնվել է 17 719 երեխա: Նույն շրջանում երկրում մահացել է 22 718 մարդ:

Վրաստանի վիճակագրական ծառայության տվյալներով, 2025 թվականի առաջին կեսին բնական աճը (ծնվածների և մահացածների թվի տարբերությունը) կազմել է 4 999: Բնական աճի դրական ցուցանիշ է արձանագրվել Թբիլիսիում (406) և Աջարիայի ինքնավար Հանրապետությունում (296):

ԳՐԱՆՑՎԵԼ Ե ՀԱՄԱՆԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՃ

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2025 թվականի երկրորդ եռամսյակում համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը կազմել է 25 հազար 347 միլիոն լարի, իսկ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ՝ համախառն ներքին արդյունքի աճը կազմել է 7,3 տոկոս:

Գերատեսչության տվյալներով՝ 2025 թվականի երկրորդ եռամսյակում աճին զգալիորեն նպաստել են հետևյալ ոլորտները՝ տեղեկատվություն և կապ (37,1 տոկոս), կրթություն (28,9 տոկոս), արվեստ, զվարճանք և հանգիստ (16,0 տոկոս), պարտադիր սոցիալական ապահովագրություն (9,1 տոկոս), ֆինանսական և ապահովագրական գործունեություն (11,8 տոկոս), առողջապահության և սոցիալական աշխատանքի գործունեություն (14,3 տոկոս), կեցության և սննդի ծառայություններ (8,4 տոկոս):

Ըստ տեղեկության նվազում է նկատվել հետևյալ ոլորտներում՝ գյուղատնտեսություն, անտառտնտեսություն և ձկնորսություն, շինարարություն, էլեկտրաէներգիա, գազի, գոլորշու և օդորակման մատակարարում:

ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՐՈՉԱՐԸՆՎԻ ԵՐԶԱՆԱԿՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ

ԹԲԻԼԻՍԻ



Առաջիկա ընտրություններին Թբիլիսիի սակրեբուլոյի Իսանիի շրջանի մեծամասնական պատգամավոր Կախաբեր Լաբուչիձեն, իր նախընտրական քարոզարշավի շրջանակում, հանդիպումներ ունեցավ մայրաքաղաքի Հավլաբարի թաղամասի, Կախեթի խճուղու բնակիչների հետ: Հանդիպումներում Կախաբեր Լաբուչիձեն մանրամասն տեղեկացավ տեղի բնակչությանը հուզող հիմնահարցերի մասին:

ԱՆԱԼՔԱՆԱԲԻ



«Վրացական երազանքի» կողմից երկրորդ անգամ քաղաքացիների թեկնածու առաջադրված, Ախաբաբերի մունիցիպալիտետի գործող քաղաքապետ Մելքոն Մակարյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Մանուկյանի հետ, քարոզարշավի շրջանակում, հանդիպումներ ունեցավ Բեժանո, Ալաթունան, Կոչիո, Սիրկվա, Ազանա, Մոդեգան, Դադոլար, Բուռնաշեթ, Ազավրեթ, Լոնատուրցխ, Տուրցխ, Օրջա, Արագվա, Մաճատիա, Կոթխա և Թոթխա գյուղերի բնակիչների հետ: Հանդիպումներում ներկայացվեցին իրականացված և իրականացվելիք ենթակառուցային նախագծերը:

ԱՆԱԼՑԻՒՆԵ



Ախալցխի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածու Վառլամ Ծիկլաուրին, քարոզարշավի շրջանակում, հանդիպում ունեցավ Ծղալթբիլա, Աժդուրի վարչական միավորների գյուղերի բնակիչների հետ: Ինչպես նշեց քաղաքապետի թեկնածուն, ինքն արդեն հանդիպումներ է ունեցել մունիցիպալիտետի կենտրոն՝ Ախալցխի մուն, 45 գյուղերում և Վալե քաղաքում:

ԱՄՊԻՆՉԱ

«Վրացական երազանքի» կողմից երկրորդ անգամ քաղաքացիների թեկնածու առաջադրված Ռոստոմ Մազարաբիձեն հանդիպումներ ունեցավ Նիժժորի, Սարո, ճոբարեթի, Զվելի, Օրգորի գյուղերի, ինչպես նաև Ասպինձա ավանի բնակիչների հետ:



Սեպտեմբերի 15-ին, մունիցիպալիտետի գործող քաղաքապետ և քաղաքացիների թեկնածու Ռոստոմ Մազարաբիձեն, Դամալա գյուղում մասնակցեց նոր ուսումնական տարվա մեկնարկին նվիրված հանդիսությանը:

ԾԱԼԿԱ

Ծալկայի մունիցիպալիտետի քաղաքապետի պաշտոնակատար Գևորգ Գալստյանը



տոնում երկրորդ անգամ թեկնածու առաջադրված Իլիա Սաբաձեն, նախընտրական քարոզարշավի շրջանակում, հանդիպումներ ունեցավ Այազան, Նարդեան, Դուչի, Զիֆթբիլիսա և Արծիվան գյուղերի բնակիչների հետ:

ՄԱՌՆԵՈՒԼԻ



Մառնեուլի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածու Դատուրի Իսմայիլովը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Զաուր Դարգալիի, մունիցիպալիտետի սակրեբուլոյի մեծամասնական պատգամավորներ Արսեն Հախվերդյանի, Լեոն Հակոբյանի և Գուրգեն Գոգյանի հետ, նախընտրական քարոզարշավի շրջանակում, հանդիպումներ ունեցավ մունիցիպալիտետի Շահունյան ավանի, ինչպես նաև Դուլարի, Ծերաքվա գյուղերի բնակիչների հետ:

ԹԵՐԻՃՂԱՐՈ

Թերիճղարոյի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածու Միխեիլ Ավցիաուրին, նախընտրական քարոզարշավի շրջանակում, հանդիպումներ ունեցավ մունիցիպալիտետի Մարաբդա, Կոդա, Մուխաթի գյուղերի,



Մանգլիսի ավանի բնակիչների հետ: Քարոզարշավին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում նաև չորրորդ անգամ սակրեբուլոյում Սամշվիլիցի մեծամասնական պատգամավոր առաջադրված Անդրանիկ Սահրադյանը և Սամշվիլիցի գյուղապետ Ռադիկ Գալստյանը:

ԲՈՒՆԻՍԻ

Բունիսիի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածու Զամուր Եիթանավան, իր քարոզարշավի շրջանակում,



հանդիպումներ ունեցավ մունիցիպալիտետի Դիսվելի, Զվարեթի, Ռատելվանի, Սենեգա, Բերթակարի գյուղերի բնակիչների հետ: Հանդիպումներին, որին մասնակցում էր նաև չորրորդ անգամ սակրեբուլոյի պատգամավորության թեկնածու առաջադրված Լեոն Մանուկյանը, խոսեցին այդ բնակավայրերում իրականացվելիք ենթակառուցային նախագծերի մասին:

ԲՈՐԺՈՒՄԻ

Բորժոմի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածու Մանուկ Գելաշվիլին, քարոզարշավի շրջանակում, հանդիպում ունեցավ Տաբաթուրի, Մոլիթի, Բալանթա գյուղերի բնակիչների հետ: Հանդիպմանը, որին մասնակցում էին նաև մունիցիպալիտետի սակրեբուլոյի Տաբաթուրիի և Բալանթա վարչական միավորներից մեծամասնական պատգամավորության թեկնածուներ Անդրյուշ Իրիցյանն ու Արայիկ Անտոնյանը, խոսեցին այդ բնակավայրերում իրականացվելիք նախագծերի մասին: **Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ**

ԿՐԹԱԿԱՆ ԵՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ՝ 2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ, ՍԻՐԵԼԻ՝ ԱՆԱԿԵՐՏՆԵՐ, ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐ, ԾՆՈՂՆԵՐ...

ԳԻՎԻ ՍԻՔԱՆԱՁԵ. «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՅՆ ՌԺՆ Է, ՈՐԸ ՍՏԵՂՈՒՄ Է ՄԵՐ ԵՐԿՐԻ ՊԱՅԾԱՌ ԱՊԱԳԱՆ»



դուք մեծ ներդրում եք ունենում հաջորդ սերնդի դաստիարակության և կրթության գործում, և այս աշխատանքը իսկապես անգնահատելի է»,- ասված է նախարարի շնորհավորական ուղերձում:

ՆՈՐ ՈՒՍԱՐԻ՝ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ՆՈՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՈՎ ՈՒ ՆՈՐ ՍՊԱՍՈՒՄՆԵՐՈՎ

Նոր հնարավորություններով, նոր սպասումներով ու նոր ձեռքբերումներով մեկնարկեց 2025-2026 ուստարին Թբիլիսիի թիվ 104 հանրային հայալեզու (տնօրեն՝ Իրինա Շամկոյան) և թիվ 103 հանրային վրաց-հայկական մասնաճյուղով (տնօրեն՝ Արչիլ Զխաիձե, ուսմասվար Հասմիկ Պապիկյան) դպրոցներում: Օրը հատկապես բացառիկ էր առաջին անգամ գիտելիքների աշխարհ ոտք դնող տասնվեց 104-րդիների և 103-րդիների առաջին դասարանիների համար:

Հավատարիմ մնալով իրենց առաքելությանը՝ դպրոցներն ապահովել են գիտելիքների բարձր որակ, սերմանել բարոյական արժեքներ, դաստիարակել արժանի հայրենակիցներ և ապագայում հայ ու վրաց ժողովուրդների բազմադարյա բարեկամության կամուրջը անսասան պահող սերունդ:

Նախորդ ուստարին եզրափակելով ուշագրավ ձեռքբերումներով՝ թիվ 104 դպրոցի 29 շրջանավարտից, որոնց թվում 6 ոսկե մեդալակիր, 16-ն ընդունվել են Վրաստանի տարբեր բուհեր, 15-ը ստացել է 100%-անոց դրամաշնորհ («1+4» ծրագրի շրջանակներում), (Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. «ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է»



«Վրաստան» թերթը շարունակում է ընթացիկ տարվա հոկտեմբերի 4-ին Վրաստանում անցկացվելիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին նվիրված «Ընտրություններից՝ ընտրություն» հոդվածաշարը, որտեղ մունիցիպալիտետների ղեկավարները ներկայացնում են նախորդ ընտրություններից (2022թ.) հետո անցած չորս տարիների ընթացքում մունիցիպալիտետներում իրականացված փոփոխությունները:

Այսօր ձեր ուշադրությանն ենք ներկայացնում մեր հարցազրույցը՝ Ախալցխի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանի հետ:

Ռուբեն օգոստոսին հասավ 53 միլիոն 906 960 լարիի: Ներկա դրությամբ, արդեն ծախսել ենք 27 միլիոն 567 429 լարի, որից 6 միլիոն 276 588 լարին կենտրոնական բյուջեից հատկացում էր, իսկ 21 միլիոն 290 841 լարին մոբիլիզացվել էր տեղական ռեսուրսներից:

- Որո՞նք են այն առաջնահերթությունները, որոնց կարգավորումը հատուկ նշանակություն ունի մունիցիպալիտետի բնակչության համար:

- Մեզ համար հիմնական առաջնահերթությունները ենթակառուցվածքի զարգացումն է, հասարակական տրանսպորտը, բնապահպանությունը, առողջապահությունը ու սոցիալական պաշտպանությունը, կրթությունը ու մշակույթը, այսինքն, այն ուղղությունները, որոնք կանխագծում են բնակչության կենսամակարդակը, սոցիալ-տնտեսական իրավիճակը:

Ըստ առաջնահերթությունների՝ 2025 թվականին ենթակառուցվածքի շինարարության-վերանորոգման համար արդեն ծախսվել է 10 միլիոն 525 221 լարի, բնապահպանության եւ մաքրման միջոցառումների համար՝ 2 միլիոն 089232 լարի, կրթության ոլորտի համար՝ 4 միլիոն 816 312 լարի, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի ուղղությամբ՝ 4 միլիոն 964 433 լարի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության համար՝ մեկ միլիոն 288 896 լարի:

Ինչպես տեսնում եք, թվերը բավականին տպավորիչ են:

- Կինդրեի իրականացրած աշխատանքները մանրամասնե՞ք ըստ առաջնահերթությունների:

- Խնդրեմ: Սկսեմ կրթության, մշակույթի, սպորտի ոլորտներում իրականացված աշխատանքներից, քանի որ դրանք ընդգրկում են դպրոցների, նախադպրոցական հաստատությունների, մշակութային կենտրոնների, մարզահրապարակների, ժամանցի օբյեկտների շինարարության-վերանորոգում, տրանսպորտով դպրոցականների ապահովում, մարզական եւ հանրակրթական տարբեր միջոցառումների անցկացում:

2022 թվականին Ախալցխի մունիցիպալիտետում բացվեց արդի պահանջներին համապատասխան 180 երեխայի համար նախատեսված թիվ 7 մանկապարտեզը, այս տարի շահագործման կհանձնվեն Ախալցխի թիվ 2 եւ թիվ 4, Ագարա, Մուսխի, Ածղուրի գյուղերում կառուցվող մանկապարտեզները:

Նշանակալի աշխատանքներ են իրականացվել դպրոցական ենթակառուցվածքի կարգավորման ուղղությամբ: Դրելի գյուղում շահագործման հանձնվեց նոր դպրոց, վերանորոգվեց ճվինթի դպրոցի շենքը: Ներկա դրությամբ, մեր մունիցիպալիտետում շինարարության փուլում է գտնվում երեք դպրոց՝ Ախալցխի (650 աշակերտի համար), Ծուղուր (250 աշակերտի համար) եւ Ծինուբանի (60 աշակերտի համար) գյուղերում:

Լիվությամբ վերանորոգվեց Ածղուրի գյուղի մշակույթի տունը, Ախալցխի մունիցիպալիտետի 20 գյուղերում ավարտվեց մարզադաշտերի շինարարություն-վերանորոգումը: «Նորացված տարածաշրջաններ» ծրագրի շրջանակում, վերանորոգվեց Ախալցխի կենտրոնական զբոսայգին, ընդլայնվեց կանաչապատման գոտին:

- Որքանով տեղեկացված ենք, քաղաքապետարանը կոնկրետ նախագծեր է իրականացնում երիտասարդների խրախուսման, հասարակական կյանքում նրանց ակտիվացման ուղղությամբ:

- Իրոք այդպես է: Օրինակ,

քաղաքապետարանի նախաձեռնությամբ 500 լարի է տրվում Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանի առաջադեմ ուսանողներին: Ավելին, երկրորդ տարին է, ինչ գործում է մունիցիպալիտետի տարածքում գրանցված այն շրջանավարտների աջակցության ծրագիրը, ովքեր հաջողությամբ են հանձնել Միասնական ազգային քննությունները եւ պետությունից ստանում են 100 տոկոսանոց ուսման դրամաշնորհ: Քաղաքապետարանի կողմից նրանց՝ 1000 լարի պարգև է տրվում:

Քաղաքապետարանը, իր իրավասության շրջանակում, կազմակերպել է աշակերտներին տրանսպորտով ապահովման գործընթաց՝ 150 ուղղություններով 50 երթուղիներով օգտվում են 19 դպրոցների 835 աշակերտներ:

Ավելացնեմ նաեւ, որ 2022 թվականից Ախալցխի երաժշտական ու նկարչական դպրոցներում ուսումնառումը անվճար է՝ ուսման վճարը 100 տոկոսով ապահովում է քաղաքապետարանը:

Էլ չենք խոսում՝ քաղաքապետարանի նախաձեռնությամբ անցկացվող մարզական, մշակութային, ժամանցի բազում միջոցառումների մասին:

- Իսկ ի՞նչ կատե՞ք առողջապահության եւ սոցիալական պաշտպանության ուղղությամբ իրականացվող միջոցառումների մասին:

- Միանգամից նշեմ, որ Ախալցխի մունիցիպալիտետի բյուջեում 25 ծրագրային կետ վերաբերում է առողջապահության եւ սոցիալական պաշտպանության հարցերին: Խոսքը վերաբերում է ինչպես սոցիալական օգնության տրամադրմանը, այնպես էլ՝ մունիցիպալիտետի տարածքում գրանցված քաղաքացիների բժշկական ստուգման, ծրագրային եւ ոչ ծրագրային վիրահատություններին, քաղցկեղով հիվանդների բուժման, սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց օգնության, վետերաններին, քրոնիկ հիվանդություն ունեցողներին դեղորայքով ապահովման եւ այլ նախագծերին: Նշեմ, որ վերոնշյալ նախագծերը գրեթե լրիվությամբ գտնվում են քաղաքապետարանի ֆինանսավորման ներքո, քանի որ մեր գլխավոր առաջնահերթությունը մարդու նկատմամբ հոգատարությունն է:

- Ձեր մունիցիպալիտետը հարուստ է պատմա-մշակութային շատ հուշարժաններով եւ մունիցիպալիտետի եկամուտների գլխավոր աղբյուրներից մեկը զբոսաշրջությունն է:

- Դուք իրավացի եք, մեր մունիցիպալիտետը՝ տարածքում գտնվող ազգային, կրոնական, մշակութային բազմերանգության պատմաշուք միշտ գրավել է զբոսաշրջիկներին: Օրինակ, Ախալցխի թերթը՝ Ռաբաթը, միայն անցյալ տարի ընդունել է 128 հազար զբոսաշրջիկ, ընդ որում, դրանցից 57 հազարը՝ օտարերկրացիներ: Ավելացնեմ նաեւ, որ ընթացիկ տարվա անցած ժամանակահատվածում, նախորդի համեմատ, զբոսաշրջիկների թիվն ավելացել է 13 տոկոսով:

Բնականաբար, լուրջ աշխատանքներ ենք իրականացնում տուրիզմի ենթակառուցվածքի կարգավորման ուղղությամբ: Մասնավորապես, հատուկ ուշադրություն է հատկացվում ճանապարհներին ու տրանսպորտին: Այդ ուղղությամբ մունիցիպալիտետի բյուջեից ֆինանսավորվել է ավելի քան 300 նախագիծ, որի ընդհանուր արժեքը կազմել է 71 միլիոն 707 379 լարի: Ներկայումս ընթացքի մեջ է ենթակառուցված 95 նախագիծ:

Ավելացնեմ, որ 2022-25 թվականներին իրականացվել է ճանապարհների վերանորոգման 98, խմելու եւ ոռոգման ջրի համակարգի կարգավորման՝ 27, բնակելի շենքերի վերանորոգման՝ 35, դրսի լուսավորության տեղադրման՝ 33, պուրակների եւ մարզադաշտերի վերանորոգման՝ 38, կամուրջների վերանորոգման եւ այլ նախագծեր:

- Մի քանի խոսք՝ առաջիկա ծրագրերի մասին:

- Ինչ վերաբերում է առաջիկա ծրագրերին, ապա կշարունակենք գործել վերոնշյալ առաջնահերթությունների իրականացման ուղղությամբ: Մասնավորապես, ծրագրել ենք Ախալցխի մարզադպրոցի հիմնարար վերանորոգում, մշակույթի տան եւ երաժշտական նոր դպրոցի շինարարություն, մունիցիպալիտետի տարածքում գտնվող մարզական օբյեկտների վերանորոգում: Էլ չենք խոսում ճանապարհային ենթակառուցվածքի կարգավորման, սոցիալական փաթեթի ընդլայնման, հասարակական տրանսպորտի աշխատանքի եւ մեր բնակչության համար կենսական նշանակություն ունեցող այլ հարցերի կարգավորման մասին:

ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

- Ախալցխի մունիցիպալիտետում «Վրացական երազանք», որպես քաղաքապետի թեկնածու, գործող քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլիի փոխարեն, առաջադրեց լրագրող Վառլամ Ծիկլաուրիի թեկնածությունը: Ինչո՞վ է պայմանավորված սույն փոփոխությունը:

- Միայն եւ միայն մունիցիպալային կադրերի նորացման անհրաժեշտությամբ: Ասածիս վկայությունն այն է, որ Լազարաշվիլի քաղաքապետության օրոք մեր մունիցիպալիտետում, իրականում տեղի են ունեցել մեծ չափերի դրական փոփոխություններ:

- Ձեր նշած դրական փոփոխությունների ամենահստակ արտահայտությունը մունիցիպալային բյուջեն է: Ինչպե՞ս է այն փոխվել վերջին չորս տարիների ընթացքում:

- Միանգամից նշեմ, որ Ախալցխի մունիցիպալիտետում 2022-2025 թվականներին տեղական բյուջեի թե՛ ծրագրման եւ թե՛ կատարման տեսանկյունից բավական նշանակալի դրական դինամիկա է վավերացվել: Դատեք ինքներդ, 2022 թվականին մունիցիպալային բյուջեն կազմում էր 28,6 միլիոն լարի, 2023-ին՝ 32,8, իսկ 2024-ին՝ 49,7 միլիոն լարի, այսինքն՝ 2022-24 թվականներին մունիցիպալային բյուջեն աճել է 74 տոկոսով:

Ինչ վերաբերում է 2025 թվականին, ապա տարեսկզբին այն հաստատվեց 36,4 միլիոն լարիի չափով, եւ ար-

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ՊԱԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԻՉԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՅՑ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



Պահպանության ոստիկանությունը Վրաստանի ներքին գործերի նախարարության հանրային իրավունքի իրավաբանական անձ է, որը գործում է 2004 թվականից:

Պահպանության ոստիկանության առաքելությունը երկրի քաղաքացիների անվտանգության ապահովման ու նրանց գործունեության համար առողջ միջավայրի ստեղծումն է: Պահպանության ոստիկանության հիմնական գործունեությունն իրենից ներկայացնում է իրավաբանական/ֆիզիկական անձանց գույքի եւ անձի անվտանգության պահպանություն, ինչպես նաեւ երկրի ռազմավարական նշանակության օբյեկտների պահպանություն:

Վրաստանի ողջ տարածքում պահպանության ոստիկանության կողմից (ինչպես տեխնիկական միջոցներով, այնպես էլ՝ ոստիկանության ուժերով) պաշտպանված է ավելի քան 15 հազար օբյեկտ, այդ թվում՝ նշանակալի ռազմավարական օբյեկտներ՝ միջազգային օդանավակայաններ, ազգային գանձարաններ, երկրում հավատարմագրված դիվանագիտական առաքելություններ, երկաթուղային մայրուղիներ:

Պահպանության ոստիկանությունը քաղաքացիներին առաջարկում է հետեւել սպասարկումները.

- * ոստիկանական պահպանություն
- * պահպանություն՝ տեխնիկական

միջոցներով

- * պահպանություն-ուղեկցում պահակախմբով
- * ավտոմեքենայի GPS վերահսկողություն
- * անձնական պահպանություն